

Ա. Գ. ՍՈՒՔԻՑՈՅԱՆ

ՀԻՆ
ԻՐԱՆԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ
ԸՍՏ ՍԱՍԱՆՑԱՆ
ԴԱՏԱԽԱՉՐՔԻ

ԵՐԵՎԱՆ—1980


Ա. Գ. ՍՈՒՔԻԱՂՑՅԱՆ

ՀԻՆ ԻՐԱՆԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՄՆՔԸ
ԸՍՏ ՍԱՍԱՆՑԱՆ
ԴԱՏԱՍՏԱՆԱԳՐԻՒ

904

ԵՐԵՎԱՆԻ ՀԱՄԱԼԻՍՈՒԹՅԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆ—1980



Խմբագիր՝ իրավ. դիտ. թեկն. դոց. Մ. Մ. Խաչատրյան
Գրախոս՝ իրավ. դիտ. դոկտ. Ա. Զ. Բեգլյան

Առարկանաց, Ս., գ.

II 982 Հին իրանական իրավունքը ըստ Սասանյան Դատաստանագրիի /Խմբ. Մ. Մ. Խաչատրյան.—Երևանի համարակալ. հրատ., 1980.—100 էջ.

Մենագործից մեջ տրված է ինչպես Գատաստանագրքի աղ-
բյուրելիք, ապահով էլ բառ Հունականին թօնմաթըրք, ինչած է
Նոր Հանակությունուն որպես իբազմայտ աղբյուրք՝ հին Հայ
իրավունքի ուսումնաբորբյան համար, բիրված է հաւաք լիո-
վոյն հավասարված պահանջերն բառեր և տերժենքներ ուղարկու-
թաւումնաբորբյան են իբրահամին պահանջն ու դարշական, բա-
րագահական ու պարապարական, ամեռախանական և մա-
սական, բրեսկան ու գատավարական իբրագունքի նորմերը
ըստ Սասանական զառասամանագրքի:

Նախատեսված է իրավագետների, պատսաբառների, լոգիստրանների, իրավունքի պատմություն ուսումնափողների համար:

$$U \frac{1202000020-10}{704(02)-80} - 48-80$$

34И (Иршан)
9.77967.99(5 Иршан)

СУКИАСЯН
АЛЕКСЕЙ ГРИГОРЬЕВИЧ

ДРЕВНЕИРАНСКОЕ ПРАВО ПО САСАНИДСКОМУ СУДЕБНИКУ

(На армянском языке)

Издательство Ереванского университета
Ереван — 1980

Ա. Գ. Փերիխանյանի աշխատասիրությամբ լուս է տես-
ուել Սասանյան Դատաստանագիրքը, որը հայտնի է որպես
«Մատյան Հազար դատաստանաց»¹:

Այդ հրատարակությունը արդեն դրվագի է մեր մամուլում։ Հիբրավի, մեծ ու շնորհակալ աշխատանք է կատարել Ա. Գ. Փերիխանյանը, ճամփորդ ու վերականգնելով Սասարակ գտառապահագրի պահապերին բարեգործ և նրա հիմնային վրա կատարելով ուսերին թարգմանությունը։ Դիմաւական այդ սիրանառով կարուր մի հուշարձան մատչելիք զարձակ նաև հայագետներին, այդ թվում և իրավագետներին։ Հրատարակությունը շահեկան է նաև նրանով, որ նրա ժներաժականը և թարգմանության վերջում բնըրգած ներհռուն «բառարան»—մենականությունները օգնում են հնագոտողներին ամփելի խոր բարոնելու Պատաստանտգրի հողածների էությունը։

Այս տեսակին ից հիշատակության և ուշադրության արժանի են Ա. Գ. Փերիխանցանին նաև այն հոգվածները, որոնք վերաբերում են Տիգրանի ստրկատիրությանն ու Հոգատիրությանը, ապանտական խմբերին և մասնավոր նպատական ֆունկտիոնին³.

Դատաստանադրիքին նվիրված մեր ուսումնակրության առաջին զինուում արժարժվում են այդ հուշարձանի ստեղծման

¹ А. Г. Перикханян, Сасанидский Судебник («Книга тысячи судебных решений», Изд. АН Арм. ССР, Ереван, 1973. *шүնүгінік Судебник*).

² Տեղականի օրենսդրությունը՝ 1975, № 1, էջ 229—
232, «Գրքերի աշխարհ»), Երևան, № 3(17), 15 մարտի 1974:

Sb. в ВДИ, 1952, № 4, 1968, № 5, 1973, № 1,

«անդամանքների, նրա աղբյուրների, բովանդակության ու
բնութագրման վերաբերյալ հարցերը Առաջին գլխի վերջում
թիրում է Դատասահնագրի այս բառերի ու տերմինների
ցանկը, որոնք վկայված են Հայերնեռում:

* * *

«Հազար դատաստանաց մատյան» անոնք կրող ժողովագության կազմվել է մ. թ. մոտավորապես 620 թ.: Այն կազմի է իրանի Պարս երկրամասի (այժմ՝ Օստան Ֆարս) Արտախաչը-հենավոնեն նահանգի Գոռ (այժմ՝ Ֆիրուզաբադ) քաղաքի բնակիչ՝ Վահրամի որդի Ֆառախվամարտը, որի ող լինելու ու գործունեության մասին մեղ այլ տեղեկություններ շեն հասել:

§ 1. Դատաստանագրքի աղբյուրները

Իր ժողովագություն կազմելիս՝ Ֆառախվամարտը օգտագործել է բազմապիսի աղբյուրներ, որոնք, ըստ Ա. Գ. Փերիխանյանի, եղել են Ծետայլաները:

1. Ավեստայի իրավական նասերը և Հատկապես դրանց մեկնությունները՝ «Հաշտակ»-ները: Որպեսզի պարզ լինի, թե Ավեստայի ո՞ր նասերը և սրանց ո՞ր լաշտակներն են ներև Ստուանյան Դատաստանագրքի աղբյուրներ, անհրաժեշտ է մի քանի հսուքով անդրադանալ Ավեստայի ու նրա մեկնությունների ծագմանն ու զարգացմանը:

Ավեստան նախ և առաջ զրագաշտականների կրոնի հիմունքները պարունակող գիրք էր Նրա հնագույն մասերը կազմվել են Արևելյան Իրանում, մ. թ. առ մոտավորապես 6-րդ դարում: Այն պարունակի է, որացի կրոնա-բարուտական դոգմաներից, նաև տեղեկություններ իրանական ժողովությունների ավանդությունների, կենցաղավարության, աշխարհական դարձության, պատմության և արևագագարի արագացության մասին:

բացում կարելի է կազմել նրա հետագա մշակումներից: Իրանական հասարակական հարաբերությունների զարգացմանը համբությաց փոփոխությունների են հնթարկվել Ավեստայի նասերը, առաջին հերթին նրա իրավական նասերը, որոնք ինչում է Ա. Գ. Փերիխանյանը, դեռևս պարբեկների տիրապետության շրջանում (մ. թ. ա. 3-րդ—մ. թ. 3-րդ դար) այլև չեն արացողում իրանական հասարակության զարգացման աստիճանը: Բնական է, որ Ավեստայի իրավական նասերը պետք է մեկնաբանվեին և պարբերաբար վերամրագրվեին նոր օրենքների ոգով: Այդ նասերը միաժամանակ թարգմանվում էին միջին պարսկերների (պահակավորների), քանի որ ավեստական լեզուն զարձել էր անհասկանականի:

Ավեստան արմատական փոփոխության ու խմբագրման է հնթարկվել Ստուանյանների օրոք՝ 4—6 դդ.: Ստուանյանները, որքեզրելով Աֆմենյանների թագավորների աշխարհակալական գաղտնությունները, կտրուկ միջաների են դիմում՝ վերացնելու Պարթևեների օրոք առաջացած իրանական աերթյան ապահովանությունը, տաւով նրան մարանը բնույթ, ճակարպելով այն օրավոր տարածվող քրիստոնեությանը: Այդ նպատակներին, ինչպես նաև իրերին կյանքը կարպավորելու նպատակին էին ժառանչելու վարշական վերափոխությունը, նոր օրենսդրության մշակումը, ինչպես նաև հին կանոնական և իրավական հուշարձանների ստուանյանը:

Ավեստայի այդ նոր խմբագրությունը բաղկացած է եղել երեք հատվածից, յուրաքանչյուրը 7 նասերից (մասից, գլխից):

Այլ հատվածներից 2-րդը, ինչպես ցույց է տալիս նրա վերնադիրը («Դատակի», վերաբերել է Հատկապես իրսկումներին: Սակայն «Դատիկ» հատվածի 7 նասերից միայն հինգն են սննեցել իրավական բովանդակություն: Եղուս երկուր վերաբերել են պատմությանը և լիտուրգիային և, ինչպես հնթարքում է Ա. Գ. Փերիխանյանը, ըստ երևույթին, խմբագրուների կողմից մտցվել են «Դատակի» հատվածը, որպեսպիսականի հերե հատվածների 7-ական նոտոքերի զասագումանը համաշխատություն:

Ավեստայի նոր խմբագրությունը հայտնի է որպես պահածավական Ավեստա (կամ Զենդ, Զանդ), Ավեստայի այդ պահածավական կանոնը ստեղծվել է Խոսրով առաջին Անուշիրվանի օրոր (531—579), Վեհ-Շապուհ մողաքամի նախաձեռնությամբ ու գլխավորությամբ Խմբագրական հանձնաժողովը միաժամանակ կազմել, վավերացրել ու Ավեստայի պահածավական կանոնն է մատրիկ նրան մեկնությունների համար Ավեստայի կազմել նրան մեկնությունները (Հաշտակները) մեկնիչների բաղադրի Այս մեկնությունների աշխատանքի արդյունք են եղել Զաշտակների մեծ մասը կազմվել է հենց Սասանյանների օրոր, 4—6 դարերում։ Ավեստայի իրավական նորմերի կիրառման համար հատուկ կարեռություն են ունեցել դրաց մեկնությունները (Կոմենտարները), քանի որ դրանցվ հին նորմերը բացարձիւ են որոն օրինադրության ու նոր սովորության նորմերի սպազմ։ Այս իսկ պատճառով էլ 4—6 դարերում գատավարությունն ենց գործնական նշանակություն էր ձևոր թրել հենց Ավեստայի մեկնարանված թարգմանությունը (Զենդը). Այս թե ինչու գավերացվեց, կանոնացվեց նաև մեկնությունների (Հաշտակների) համահավաքը։ Հասկանալի է, թե ինչու ենց պահանջան Ավեստան ու քառ շաշտակների համախավաքը դարձան Յառափակարափի կազմած Պատաստանագրի կարեռ ազրուրները։

2. Գատավարության մյուս ազրուրը կազմել են «քարտաստան»-ները, այսինքն՝ գատավարական կանոնները՝ սահմանված թարգմաների հրամանագրերով կամ գլխավոր մողաքամունքի հրաման-շրջաբերականներով⁶։ Ֆառախամարտը լայնորեն օգտվել է դրանցից։ Թիրելով այս կամ այն ավեստական լաշտակը (մեկնությունը), նա դրան հակադրում է պահանջանում գործող գատավարական նորմը, եթե առաջն արդին հնացած է եղել և չի համապատասխանել պահածավական կանոններին («քարտաստան»-ներին):

Այս կարդի ազրուրներից Գատաստանագրում արտացոլվել են Կավատ (489—531) և Խոսրով 1-ին թագավորների հրամանագրերը, օրինակ, նրանց հրամանագրերը՝ մի

յարք պաշտոնականների համար կնիքներ սահմանելու մասին, Դատավարական բնույթի կարևոր ակտեր են կազմել նաև զրագայտական բարձր հոգության ներկայացուցիչները, որոնք մասնակցի են զատավարության կազմակերպմանը, Դրանքից Ֆառախամարտը հիշատակել է գլխավոր մողաքի Վեհ-Շապուհը «Հիշեցնումը», նրա չշորորականը, ինչպես նաև այլ կրոնականների բազմաթիվ հրահանգները բառավականի է այս խնդիրների մասին։

3. Գատավարական նորմեր Ֆառախամարտը քաղել է նաև «Դատաստան-նամակը» (Դատաստանագիրով) կոչվող մի ժողովածուցից, որը, ըստ երկույթին, կազմվել է ուույն Խոսրով 1-ին Անուշիրվանի օրոր։

4. Գատաստանագրի ազրուր են եղել նաև այն հատուկ ժողովածուները, որոնք կտրմել են սասանյանների արքակետության երկրորդ շրջանում և ունեցել են հրահանգությունը (ձեռնարիփի) նշանակություն համապատի զատավարությունների համար։ Այս ուղղուցույները ընդհանուր տեղելությունների են պարունակել այս կամ այն գերատեսչությունների, պաշտոնների ու պաշտոնյանների իրավունքների ու պարտականությունների մասին։ Դրանք պարունակել են նաև բարգամիներ նորմագիր բնույթի հրամանագրերից ու որոշումները։ Գատաստանագրում հիշատակած են նման ժողովածուներից երկուուր «Պաշտօնատար անձանց պարտականությունների մասին մասայանոր և «Մողաքանների պարտականությունների մասին մասայանը»։ Ինչպես ճիշտ նշում է Ա. Գ. Փերիխանյանը, «Ծիշյալ և սրանց նման մյուս ժողովածուները արքեափոր էին ու միայն նրանով, որ քաղաքածուները կին պարունակում պաշտօնական փաստաթղթերից, այլի այլու, որ գատական աշխատողներին տեղյակ էին պահում ընդհանրապես աշխարհիկ ու հոգեու պաշտօնատար անձանց իրավական դրույթյանը, որպեսին նրանք համար պաշտօնատար իրավագոր աալու, թե որ զործերով կարող է նա ներկայացնել այլու իրավական անձնը։

5. Ֆառախամարտը օգտվել է նաև Գոռ քաղաքի արխիվում եղած գատական արձանագրություններից և, թերևս,

այնտեղ պահված մասնավոր անձանց վերաբերող փաստա-
թղթերից կամ դրանց պատճեններից:

§ 2. Դատաստանագրքի բովանդակությունը⁷

Մեզ է հասի Սասանյան Դատաստանագրքի նախնական ընագրի մոտ 60%-ը, այս էլ տեղ-սեղ խաթարված վիճակում: Մեզ հասած աեբստը, ըստ Ա. Գ. Փերիխանյանի հրատարակության, բաղկացած է Ֆառավորման դեպարտամենտի նկատմամբ նիւթ (արիամբընուայից) և 37 գլուխց՝ որոնք պարունակում են 150 Նորված Ներածակնար գերազանցված է ոչ թե սկզբում, այս Գաֆտաստանագրքից համարյա մեջադրում (էջ 235—236): Այստեղ Ֆառավորմարը իր կազմած ժողովածուն անվանելի է «Հաղար դատավճիռների մատյան» ու ներկ ղերթու Կրոնական շղարշով պատելով իր ժողովածուն տեսառածական իրավական նորմերը, նա ասում է, որ այս մատյանը արարի զորության զործիք է, որը ծառակիւր է նրան (Արամագիին): Իր ամենափառությունը զախարիսկու ստորագրը (Հարթիք), վերականգնելու (աշխարհում) իր տիրապետությունը ու կարգավորելու (իր) արարագործությունը վերացնելու թշնամները ու, ի վերց, սահմանելու անմարդարությունն ու լրացի լիիշխանությունը»: Նշելով, ո նման ընդարձակ մատյանը տրված է մարդկանց, որպես մարդկային ցեղը պահպան այն մինչև աշխարհի կատար բացը (վերը), Տեղինակն այն Համարում է մարդկանց իմաստավորության, իրեն ու զորությունների գանձանելիության, կարգավորության և ողջամատության հիմունքներ շահմարտ, որնք նա արձանագրել է ամենահիմնական գծը ողջիւ:

Դատաստանագրքի ղլուխները շարագրված են, որպես կանոն, բայց կարգավորման օբյեկտների: Սակայն երբեմն միենալու գլխաւոր տեղ են գտնել աւարտեր՝ հարաբերություն-

⁷ «Судебник». «Введение», т. 25—26:

§ Ա. Գ. Փերիխանեանի հրատարակած տեքստում զիտիխների թիվը Հասցիած է 54-ի, բայց որ հաշվի են առնվիլ նաև նրա մեզ Հասաւատինիներու

Ներ կարգավորող ջողվածները Հոդվածներից Հոդվածներից յուրաքանչյուրը պարունակում է մի քանի կազուս (դատական դեպք) ու դրանց լուծումը:

33, 35, 40 և 45 պարտի մարման, պարտիք բռնպահնձմներ, զրավիք, չկնքերակից ժառանգակիցների և համարական մասնակիցների կողմէց պարտիք մարդկու, համասեղ երաշխավորության ու ընկերակցության, հրաժարապնի ու տուգանքի վճարման, բարեկազաշական նպատակներով կատարվող գործիքի փոխանցման և բանափոր համաձայնությունների ու պայմանագրերի կատարման անկարուության մասին։ Ամուսնա-քթանակելիս իրավունք—պ. գլ. 19, 26, 28, 30 և 48՝ ամուսնալուության, խնամտակալության, ապրության միջոց տարւու թիմանմակալության, միջակ կանանց և անպատշաճ բարբի տեր կանանց մասին։ 5. Ժառանգական իրավունք—պ. գլ. 41, 43 և մեկ ՀՀամարակալված գույք (էջ 60)՝ ժառանգների, ժառանգության ընդունման և օժանդակ իրավահաջորդության (էպիկերության) մասին։ 6. Քաղաքացիական և քրեական դատավարություն—պ. գլ. 18,

397 և 402)¹ դասերի կողմից ընդունած դատական որոշումների, լիազորված անձի, Տակասական ցուցմունքների տալու, դատարան նշերկայանալու և դատարանի որոշումներին շնորհած է:

թարկվելու, հայցվորի, դասարանում որևէ մեկին ներկայացնելու, փաստաթղթերի և երդման մասին:

Վեր նշված գրուխների մասին պետք է ասել, որ թեև դրանք վերաբերում են իրավունքի արքերը ճյուղերին և յուրաքանչյուր զիմբ իրավական նորմերով կազմավորվել են, որպես կառու, միասն այս արարքականություններն ասկան այդ սկզբունքով հետաքանակություն չի կիրառված: Եթեմն նույն պահում հիշատակված են իրավունքի արքերը նորմերով կարգավորվող հարաբերությունները: Համախ էլ արքերը դրամին նույնամասն հասարակական հարաբերությունները: Այդ առումով Գատաստանագրի գլուխ ներից մի քանիս մեջ եղած իրավական նյութը կարող է դասել իրավունքի մի շարք ճյուղերում: Որինակ՝ 17-րդ դպրության վերաբերում է ստրուկների իրավական վիճակին, քարգավորում է և ուղարքին, և պարտավորական, և ժառանգական հարցերի կամ 29-րդ գլուխը, որը վերաբերում է լիտորիաներին (պատարագին և այլ կրոնական ծեսներին), նյութեր է պարունակում նաև նվիրատվության, խնամակալության և գրավի մասին:

Իրավունքի տարրեր ճյուղերը և դրանց վերաբերող դյունկները թվարկելին, մենք չհիշատակեցինք քրեական իրավունքի ճյուղը: Այդ այն պատճառով, որ Գատաստանանագրի մեջ հասած տեքստում կարգունքի այլ ճյուղի վերաբերությ հատուկ գլուխ չկա: Սակայն հանցագործությունների ու պատիճների մասին նյութեր կան Գատաստանագրի բազմաթիվ էջերում, օրինակ՝ 35, 37, 39, 218, 219, 220, 349, 351, 412, 422, 424 և այլն:

Գատաստանագրում եղած նյութը, ինչպիս այդ երեսում է նրա գլուխների թվարկութից, վերաբերում է հիմնականում գույքային հարաբերություններին և գատավարությանը: Ինչ վերաբերում է վարչական իրավական նորմերին, ապա դրանք հիշատակված են այն համարության համար համարական հարաբերությունները: Ֆատաստանագրի բազմաթիվ էջերում, օրինակ՝

35, 37, 39, 218, 219, 220, 349, 351, 412, 422, 424 և այլն:

Գատաստանագրում արտացոլված իրավունքի ճյուղերի ուսումնասիրությունը տալու ենք ստորև: Այստեղ սահմանափակվում ենք այդ հուշարձանի ընդհանուր բնութագրմամբ:

§ 3. Գատաստանագրի բնութագիրը

«Աստանյան դատաստանագրիրը»-ը, ինչպես ճիշտ նշել է Ա. Գ. Փերիի հայացանը, օրինագիրը չէ, ոչ էլ իրավաբանական ասումնասիրություն (արակտաա): Այն մեկն է Սասանյան-ների օրը տարածում գտած, իրավական կազուաներ պարուակող ծողվածուներից, որոնք ծառայեն: Էն դատավորներին և, ընդհանրապես, դատական պրակտիկային որպես ուղեցույց, ձեռնարկից: Այդ առումով այն նորմատիվ (իրավական) ակտ չէ, քանի որ չի սահմանված կամ վահերացված պեսական հշխանության կողմցի: Այն իրավանայտ արդրություն է, այսինքն մի աղբյուր, որի օգնությամբ հնարավոր է պատահացում կազմել չին իրանական հասարակական և իրավական հարաբերությունների մասին: Սահմանը այն հատուկ կարգի իրավահայտ աղբյուր է (ի տարրություն աղջազրական և պամապրական նյութիցի), քանի որ այն կազմված է իրավական ակտերի և ստորագրական իրավական նորմերի հիման վրա, որոնցով կարգավորվել են հասարակական հարաբերությունները: Ֆատաստանագրի պատճենը պատահանձների մատուցում»-ի մեջ այլ առանձնահատությունը այն է, որ պատճենակում է այնպիսի նյութեր, որոնց մասին այլ իրանական նմանօրինակ հնչարձաններ համարյա աեկեղություն չեն պարունակում: Հերապի, այն բարգարագանդակ հուշարձան է, որը հնարավոր է գարձնում ծանոթանալ Սասանյան Պարսկաստանում գոյություն ունեցած հասարակական ձևերի ու հաստատությունների, գույքային ու պարտավորական հարաբերությունների, հանցագործությունների ու պատիճների, զատարանակազմության ու զատավարության և իրավական փաստաթղթերի ձևակերպությունը հանձնառությունը գծերով վերականգնելու ստրկատիրական և մասսամբ վազբեռդաշտական ժամանակաշրջանների իրանական իրավունքի համակարգը: Գատաստանագրում բերված իրավական նորմերի ուսումնասիրությունը ցույց է տալիս նաև,

⁹ «Судебник», «Введение». № 14, 23, 24.

որ հին իրանական իրավունքը իր ժամանակի համար զարգացման բարձր ասաբիման է ունեցել: Վերջապես, Գատառանագիրը մեծ արժեք ունեցող երկ է՝ սասանյան և հետագա շրանաների պարսկական և այլ հուշարձանների ուսումնաբիրման գործում:

* * *

Սասանյան Գատառանագիրը առանձնատպես կարևոր իրավահայությունը է Հայաստանի ստրկատիրական հասարակական հարաբերությունների և իրավունքի ուսումնափրախան համար: Հայ ստրկատիրական իրավունքը մինչև օրս մահակրիտ ու խորը չեւ ուսումնափրախան: Այդ պետք է բացատրել առաջին հերթին գրավոր աղյուրների խիստ արդությամբ, եթե շատենք՝ իսպառ բացակայությամբ:

Սասանյան Գատառանագիրը գալիս է այդ բացը մասմբ վերացնելու Այն, ինչպես նշել ենք վերը, արտացոյնել է հին իրանական հասարակական-քաղաքական և իրավական կարգերը, որոնք շատ որդհանրություններ են ունեցել նախարարիստուններկան (ստրկատիրական)՝ Հայաստանում գործում ունեցած կարգերի հետ: Հայաստանը՝ դանվելով Աքեմենյան և Սասանյան տերությունների կազմում, ուշնաւական, քաղաքական և մշակութային կապեր ունենալով նաև Պարթևական տերություն Շատ, չէր կարող շազդվել նաև իրանական իրավունքից: Այդ մասին են վկայում այն փոխառությունը, ու ակրմինները, որոնք տեղ են գտնել հին Հայ մատենագրության մեջ՝ մանավանդ կրոնական, պատմագրական գործերում և կանոնական որոշումներում: Եշելով պտիավերին բառերի ու տերմինների փոխառության փաստը, հարկ ենք համարում արտահայտել մեր տեսակետը նման փոխառության բնույթի մասին: Միայն պինդին մասեմ, որ առաջին բառերի ու ակրմինների ու տերմինների մասին պահանջանակ է առաջարկել գործում առաջին բառերի ու ակրմինների փոխառության փաստը, ինչու առաջին բառերի ու ակրմինների ու տերմինների մասին պահանջանակ է առաջարկել գործում առաջին բառերի ու ակրմինների փոխառության բնույթի մասին: Այդ կապակցությամբ նշենք, որ գասակարգային հասարակությունը, պետությունը և իրավունքը Հայաստանում առաջացել են ավելի վաղ,

թակ իրանում: Հիշենք, թե կուզ, Բիայնական թագավորությունը:

Հայաստանը ունեցել է իր քաղաքական և իրավական համակարգը, Նախարարն նրա Աքեմենյան տերության մեջ ներառնելը: Հետաքարը, հին հայերը ունեցել են ո՛չ միայն իրավական նորմեր (վարքադի կանոններ), այլև այդ նույնը ձեւակիպող աերմինաբանույթում: Ժամանակի ընթացքում բնիք հայ բառերի ու տերմինների մեկ մասը փոխարինվել է Համապատասխան պահանջական տերմիններով, որոնք գործածական են եղել հին պարսկական տերության մեջ, այդ միուսն նաև Հայաստանում: Այսպիսով, աեւդի է ունեցել ոչ թե հայ իրավունքի փոխարինումը պարսկական իրավունքով, ոչ թե իրավական նորմերի բռվանդակության փոխարինույթուն, այլ այդ նորմերի արտահայտման արտաքին ձեւերի փոխառությունը: Նորմերի արտահայտման արտաքին ձեւերը (տերմինաբանույթը, նորմերի ձեւակերպությունը) փոխ են առնվել այն զերքերում, եթե որպանք համապատասխանել են հայ կրտսերների նորմերին: Մեր միտքը պարզելու համար բերենք մի քանի օրինակ Հին Հայաստանում եղել են պատմությունները: Այդ խավը ունեցել է իր հուրյունի արտահայտող աերմինը, որը ժամանակին փոխարինվել է հին պարսկական ազատ տերմինով: Հայաստանում եղել են առանձնական հայություններ, որոնք պահանջական բառով կոչվել են դայակին Հայերը ունեցել են վեճեր լուծող օրգաններ և դրանց ընկի անունները, որոնք փոխարինվել են պահանջական գատ և ատյան տերմիններով:

Մենք շենք ժխտում այն իրողությունը, որ երեքն կարող է փոխ առնվել նաև այլ իրավական սիստեմի որևէ ինստիտուտ, այսինքն՝ կարող է տեղի ունենալ բառ էլության փոխառություն: Օրինակ, վայսի (վազրփի)՝ բարեկործական հաստատության և նրան նվիրաբերած կալվածի (վազրածի) ինստիտուտը, ինչպես ապացությունը էլ. Գ. Փեղլամանյանը, հին իրանական իրավունքից անցել է շարժաթիվն: Բացառված էլ, որ նման (բառ էլության) փոխառություններ կարող էին կատարված լինել նաև հայ իրավունքի կողմէց: Այդ հնարավոր կլինի պարզել համեմատելով իրավունքի տարրեր սիստեմ-

ներ, տվյալ գեպօռմ՝ հին իրանական ու հաշկական իրավական սիստեմները, մի գործ, որը սպասում է իր կատարողին:

Ի դերը նշենք, որ սպառել բերվող բառերի ու տերմինների ցանկը մենք բարել ենք Ա. Գ. Փերիխանյանի՝ վերը նշված Դատաստանագրի վերջում տրված հիմնալիք սպասմասիրություններից: Այսուղեք (չեզ 430—555) բերված են նաև այն հայերեն բառերն ու տերմինները, որոնք ժամանակի փոխ են առնվել հին ու միջին պարսկերեն լեզվից: Նշենք նաև, որ հին հայերը՝ փոխ առնելով պահապահան բառերը, հիմնականում պահպանել են նրանց արտասանությունը, սակայն համաձայնեցրել են հայերեն տառապարագույթան և հնչունական համակարգի կառուներին: Բերվող ցանկը լի սպառում բռնուր այն պահպանակ տերմինները, որ Հայերը փոխ են առնելով պարսկերների: Կրկնում ենք, այստեղ տրված են միայն այն փոխառված բառերը, որոնք կան նաև Սասանյան Դատաստանագրում, որը, ինչպես նշվել է վերը, լրիվ շի հասել մեզ: Սակայն բերվածն էլ բարական է ցուց տալու համար այն ընդհանրությունները, որ եղել են զին իրանական և հայկական հասարակական ու իրավական հարաբերություններում:

Ստորև բերվող ցանկում բացարկված են այն բառերը, որոնք հնում ունեցել են այլ նշանակություն, քան դրանք ունեն այսօր: Բերնենք մի քանի օրինակ՝ «Ազատություն» սեպ. «Հայկան» հնում նշանակել է՝ «անձնական բաժին»: Այդ բացարկությունը մենք սպել ենք՝ բացարկվող բարդ բացարկությունից բաժանելով գծիկով: Այսպիս, ահան—հավանարար դիրքորոշումները, որոնք ներդաշնակություն: Անգարել—հաշվի մի առնելու Անգամենել—ինչպես առնել, սեպել, համարել, պատմել: Անգամենելունել, խորհրդածել, պացառցել, փորձել, անդանումն—մատուր, սորակուտանի: Անգարձ—կոտակ, խորհուրդ և փոխ առնվածի իր (յ) անօթ առնում—փոխ եմ առնում, ստանում որպես անոթ կամ կահ: (յ) անօթ տամ—փոխ տամ և Անվագիրական: Ապական—ապականված, ապականել—իշղոնել, վնասել, բարել, բարելութել, անհնտացնել, լոշել, ավրիլ, կեղտոտել, պղծել (կուպին):

Անակ, ժառանգություն: Ազատություն սեպհական—անձնական բաժին:

Աշանգ—հավանարար զինվորական կարգ, ներդաշնակություն: Աշոկ—վնաս, անմաքրություն, հանցանի: Ամբաստան—հակասակորու, մեղաղորդ, հայցվոր: Ամբաստան լինիք—մեղաղորդ եմ, հայց եմ հարուցում:

Անշախարհիկ—պահպահարար, ստրուկ, ստրկուչի: Անշարք—հաշվի առնել, սեպել, համարել, պատմել: Անդամենելունել, խորհրդածել, պացառցել, փորձել, անդանումն—մատուր, սորակուտանի: Անգարձ—կոտակ, խորհուրդ և փոխ առնվածի իր (յ) անօթ առնում—փոխ եմ առնում, ստանում որպես անոթ կամ կահ: (յ) անօթ տամ—փոխ տամ և Անվագիրական: Ապական—ապականված, ապականել—իշղոնել, վնասել, բարել, բարելութել, անհնտացնել, լոշել, ավրիլ, կեղտոտել, պղծել (կուպին):

Ապակպել—հաձնարարել, պատվիրել:

Ապուր—թալան, ավար, կողոպւտ: Ալոյան: Ալորուշան: Ալրմավ, արմավենի: Արժան—գին ունեցող, արժենալ:

Բազ—բաժին, մաս: Բազուկ: Բախտ—նախասահմանված բաժին: Բախտ—կապ, շղթա: Բաշխ—բաժին: Բաշխել—նվիշել, Բարպատու: Բժիշկ: Բուժի: Բոն—հիմք, հիմնական: Բոշխնել (բժբոշխնել)—օգտվել, ճաշակել, վայելել: Բովանդակակ—լրիփ:

Գամ—բայլ: Գանձ: Գերդաստանիկ—լընդոժին, ստրուկ, ունեցիլ: Գդրի—զինվոր, պահորդ: Գումար, գումարել: Գրավ, գրավական:

Գայակ—ստնտու, աղախին, դաստիարակ: Դաշտ: Դաշտան: Դաստակերու: Դատ—օրենք, իրավունք, տրդարություն: Դատախազ—հայցվոր: Դատաստան—օրենք, իրավունք, արդարություն, վճիռ, դատավճիռ, դատարան, դատադան: Դեպակետ: Դեպակետություն: Դեմակ—գատահմարավ, պարսալունք, նախատինք: Դորովի—գատահմարավ, պարսալունք, նախատինք: Դում—կրոն:

Աղտու—ստրկությունից պատարագրված մարդ, տոհմիկ, համայնքի անդամ, քաղաքացիական իրավունքակություն ունեցող մարդ, քաղաքացի, տիրապետող դասակարգի ներկայացուցիչ: Աղտություն—քաղաքացիական իրավական վիճակը:

* * *

Աղտու—ստրկությունից պատարագրված մարդ, տոհմիկ, համայնքի անդամ, քաղաքացիական իրավունքակություն ունեցող մարդ, քաղաքացի, տիրապետող դասակարգի ներկայացուցիչ: Աղտություն—քաղաքացիական իրավական վիճակը:

Դրոշմ—խարան, փորագրված կամ խարանված նշան Դրոշմ—խարդախոթյուն, ստոլիցը, խարերայոթյուն: Դրոշման: Դրժել—պայմանագիրը ուրանալ, վնաս հանցնել:

Եմուճան (սրբնից՝ պատմուման) — հողակտոր, որը «Հանդերձանքի Համար» շնորհվում էր ժառայող հեծայիլին որպես պարզեական: Երամ, երամակ-հոտ, մարոխ, մարդկանց խումբ:

Զանդիկ—մանիքեական (հերձածող դրադաշտական): Զանդ—բացի, առանձին, այստեղից՝ ազատ, ապատություն՝ ժառանգություն, պայազատ—ժառանգ, իրավաշաջորդ: Զուր (սուր) վիա: Զրպարտ, զրպարտել—սուս մեխազրանք անել:

Թշամիթ—քժմիտ, չարամիտ: Թշվանիկ—կարող, զորեղ, ընդունակ, վճարունակ:

Իր—գուլք:

Խոստակ—իր, հողակտոր, կալված, կայք: Խոստակդար—լախ առողուով ժառանգ, կալվածը կրող: Խոստուկ—խոստովանող, հանձն առնող:

Կախարդ: Կամ (կամք) —ցանկություն: Կամակ—կամքի համաձայն եղած, ախորդելի կերպով: Կերպ—կերպարանք, դեմք, երևս, ձև: Կուշու—կողք, կոտի:

Համակեն—կրոնակից, զրդաշտական ժխտակատարության ամբողջությունը, ամբողջ զենք (կրոնը) լավ գիտցող, հմուտ կրօնագետ: Համարակար—ֆինանսական պաշտոնյան: Համիմաղ—մըրու (դատարանում), ոսթի, հակասակորդ, դատավորություն պահանջող: Համորնել—լրիք, ամբողջ: Հանգամանք—ժամանակ, պարագա: Հանգերձ—հանգերձ, հագուստ, սարքավորմ: Հանգերք—միասին: Հանձարք—ճանապարհ, կերպ, եղանակ, բանականություն, գիտություն: Հավիտյան: Հարի: Հույզ—փնտուուք, որոնում, ձգտում, երազանք. Հուզել—որոնել (ճշմարտություն): Հըրահանգ—սովորեցնել, զգորց, վարժություն, կրթություն, դիտություն: Հըրաման: Հըրովարտակ—փաստաթուղթ, պաշտոնական գիր, նամակ, գրություն:

Ճամբար—մանյակ, վարսակալ, օդակ, զինվրական վրանների օգակածն դասավորում: Ճարտար—վարժ, աշողակի: Ճիշտ, ճշտել:

Մատյան: Մովկես, մովկետ: Մովկան (մովաց) հանդերձապետ—ափազոս: Մույր, մովալ—ինդիր, գանգատ, ողորմություն խնդրել: Մուրհակ—կնիք, զավերական զրություն (սորորագրված և կնքված):

Ցաշա—աղոթք, երկրպագություն: Ցաշտ առնել, զոհել: Նահանգ: Նամակ: Նշան:

Ծիսակ—ուղիղ:

Խիստագրուծ—խոստումը, պայմանը խախտող:

Խոտան—թագավորական: Խոտանիկ: Խոտիկան—հավատարիմի, վստանելի անձ:

Չահ—շրջոր:

Պահ, պահճ—պահպանություն: Պալագատ—ժառանգ, իրավահաջորդը, պայազատել—ժառանգել, ժառանգ գտնեալ: Պայման—համաձայնություն: Պայքար—վեճ, կոփ, բանակոփի: Պանդոկիտ—արտաքիմած: Պատասխան—հայտարարություն (զատարանում): Պաշտպանություն: Պատճեն: Պատմուճան: Պատրույք: Պատուհան—պատիժ, շար գործերի հասուցումն: Հարցարնեություն: Պատրուճակ—օրապահիկ, մորթվելու կենդանի: Պարմայել—շօշափել, փորձել, լուր սիսակի փորձն առնել, տուժել, վնասը քաշել, շափել: Պետ(թ): Խտագով—գատապաշտպան, ներկայացցուցիչ:

Ռամ, ռամիկ—հասարակ մարդիկ: Ռատ—մովկետին տրված տիտղոս (զլսափոր, մեծ, տեր): Բնծիկ—օրապահիկ, վարձատություն, նպաստ: Բնտաստակ—զուու, երկիր, բնակիթան վայր, կենտրոնական վայր:

Անկ—հարկ, տորք: Սահման: Սաղար (սալար՝ սարդար բանից) —պիտ, առաջնորդ, ինսամակալ: Սար—գուլի, զազաթ: Սատեր—կշռաչափ (3, 4—16, 32 զրամ): Սարդար—զիսալոր, պետ: Սրահ:

Վաշի—աճ, ստկոս, վաշխառու: Վաշեր—հավատալի, ստուգ, վաշերական: Վաշերական—արժանահավատ: Վաշերական մատանի—կնքած մատանի: Վարս—շյուսությած մաղեր: Վեճ—առաքինի, լավի, վեճեր—վախեցող, անկարություն: Վեճ—սահմանապատճելը կամ քածանվելը (կարծիքների կամ մարդկանց), ճակատագիր, բաժին (ժառանգություն): Վերս—շրջան, պտույտ: Վզեան, վզենակ—

զեն, վնասակար գործ, առևանք, առլանք: Վիճակավոր—
զերական: Վկա: Վճար—Հասպուղություն: Վճռա վնաս—պակաս
ուղիղություն, մեխափորտիթյուն, զանցանք, Հանցանք, հյութական
վնաս: Վնասակար—Հանցագործ, մեխափորդ: Վրան:

Sənçim—սերմ, սերունդ, ցեղ, ծագում: *Sənjd*—տուզանք, վնաս, ծախսեր:

$\Phi_{\text{ПЧН}}(k) = \text{пштшшппи} \theta_{\text{ПЧН}}$

Օստան (ոստան) — թագավորական կալվածք: Օստանիկ (ոստանիկ) — ոստանում հղատեր, որին պատկանող պայմանական տիրությօթ ժամանակին վեր էր ածվում ժառանգական: Տարբարա — այլ տեղացին: Օրեն(ք) — սովորությ, վարչագիր կանոն, հարդ, հղանակ: Օրեն է՝ պատշաճ է, ընդունված է: Օրենակ — պահապ:

նակելի է այլիքրացի, օտար (անշախաբքիկ): Եթի անշահը-
րիկը օտարածին էր, որը գերի էր վերցվել կամ զնվել այլ
ժայռում, ապա, կարիքի է կոհածել, որ բանդակը ընդունի
ղետք է եղած լիներ և, միաժամանակ, ղղաղչականա:
Ասկանավիլի է, թե ինչու Դասասանանիքիքը (1, 7–10 ըու-
ժամանակական է զնում տաճարին պատկանող բան-
դակների և անշահըիկների միջև, սահմանելով, որ բանդակ—
ստրուկր կարող է ծառայել ասամքին, ատրուչանի մոտ որ-
պիս սպասարկոր, իսկ անշահըիկ—ստրուկը՝ ոչ: Տվյալ զիպ-
տում բանդակի—ստրուկի նմանվում էր Ծիրողութիւն: Ինչ
վերաբերում է անշահըիկ—ստրուկին, ապա նա՝ պատկանե-
լով Հանքեր ասամքին, կարող էր ծառայել նրան՝ կատարե-
լով զրի (ասենք՝ աղջուակին) աշխատանիքին, քանի որ նա
օտարիքրացի էր և, համեմարտ, ալրազան:

1, 10—13, 1, 13—15 և 1, 16—17 Հոգվածներից կարելի է եղանակացնել, առ Սասանյան պետությանը՝ զրաբաշտական կրոնը տարածելու նպատակով, առավելի լուծնենար է առանձին արև հանդին ատամանություններին նկամացր

Այսպես, իթե քրիստոնյացն պատկանող անշահճիկը քրիստոնեություն էր ընդունում, ապա նա կարող էր ազատի ստրկությունից միայն իր փրկարինք վճարելոց հետո: Իսկ եթե այդ ստրուկը զանում էր զրադաշտական և ծառայության մտնում զրադաշտականների մոտ, ապա վերջինները պարագագոր էին վճարել նրա փրկարինք և ստուգել նրան, որից հետո ազատագրված ստրուկը փոխատուցելու էր նրանցից: Այսուհետև, օրենքն արգելում էր անշահճիկին վաճառել ոչ-զրադաշտականի: Ընդ որում, այդ օրենքը խախտող վաճառություն և գնողը նմանեցվում էին գողերի և դատապարագում խարանման («գորշմ»-ելու):

Վերցապիս, ալլակըն անշահրիքը մնում էր ստրուկ, ինչ նա զրագաշտական կրոն չէր ընդունում. Այս վերջին ճանապահներ մի միջոց էր՝ ստրուկներին հեռու պահելու բրիտանականիցն կամ այլ ոչ զրագաշտական կրոն ընդունելուն:

Բացի «բանդակ» և «անշահրիկ» տերմիններից, ինչպես նշված է վերը, կային ստրկություն հասկացությունը բնորո-

ՊԵՏԱԿԱՆ ԵՎ ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

Այստեղ հետազոտվում են Դաստիարակության խոդաբանը, որն էլ կիրարելում են Հասարակական խավերի իրավական ինձնանքն և պետական համակարգին, այդ թվում, ուստական համակարգին:

§ 1. Հասարակական խավերի իրավական վիճակը

Գատաստանագրիք մեջ բազմաթիվ նորմեր կան ստրուկտորին մասին։ Դրանց ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ եղել է ստրուկտորին մի քանի կատարողաներ, ինչպես երևում է անվանումներից։ Ստրուկտորմինը Գատաստանագրիքը արտայալում է բանական, անշահրիդ, պարագային, առափնչ, թան, գեսակ, (վեխակ) անուններով։ Անմինից շատ շիշատակված են անշահրիդը և բանգալը, որոնք, ըստ երևություն, ստրուկտուացագություն բնորոշ և արածածված տերմիններն են եղել Անշահրիդը տերմինը բառացի նշա-

շող այլ անվանումներ են: Դրանցից էր «պարհստարիչ» անվանումը, որն ըստ Ա. 40, 4 հոդվածի,՝ կին-ժիերողով էր (մինչեն բանգակը՝ տղամարդ ժիերողով): Նույն հոդվածում հիշատակված է նաև «ռահիկ»—սարուկը, որը, համարաբ, սաճարի սպասավորներին ծառալող տղամարդ էր: Այս տերմինը, ըստ Ա. Գ. Փերիխանյանի (էջ 516), «բանակի տերմինին նման ծագել է «կապված» բառից: Բազմաթիվ հոդվածներում ստորև հասկացությունը բերված է «թանօ քառություն» աստիճանը 92, 10 հոդվածում արտահամարդ է նաև «վիսակ» («վիշակ») բառով, որը սկզբում, համարաբ, նշանակել է «ընդողին»՝ ասելով պատկանող մարդ:

Սարուկ հասկացության նշված բազմաթիվ անվանումները վկայում են սարկության առաջացման տարրեր ձևերի և, մասնաւոր սարուկների տարրեր կատերփանների և դրանց իրավական դրվագներ ասարքությունների մասին:

Սարուկների մեծ մասը շահագործվում էր արքունիք, տաճարական և պավանուն պատկանող խորշը տնօսեսություններում, որոնք և սարկատիրական կացութամակի հիմնական կողովներն էին: Սարուկներ ունենին նաև քաղաքացին և գյուղական համայնքների վերախավերը:

Մշտական («անվիտենսկան») սարկությունը պահպանվում էր, ըստ 101, 8—11 հոդվածի, տաճարական տնօսեսություններում: Այդ հոդվածում սահմանված է, որ տաճարությունների բրանգակի երեսները շատունք մշտական պատկերություններ են տաճարին: Այդ նոսում է այն մասին, որ Սասանյան պետությունը ըստ ամենայնի ուժեղացնում էր տաճարներին ու քրծությունը:

Սարուկների իրավագործկ վիճակի մասին են վկայութեակալ փաստերը: Նրանց կարելի էր գրավ զնել կամ վաճառել սեփականատիրոց դաստակերի հետ միասին (38, 13—17 հոդ.): Նրանց կարելի էր զնել կամ վաճառել նաև առանց հոդի (7, 4—6 հոդ.):

Ըստ 40, 17 հոդվածի, եթե անշահրիկ կինը (սարգության) վաճառվում էր զդի վիճակում և հղությունը պարզ երևուած:

Էր ապա զործարքի առարկա էր գառնում նաև հղությունը (իմա՞ երեխա ունենալու հպանականությունը):

Անշահրիկի զինը որոշվում էր ըստ նրա տարիքի և այս կամ այն առավելության (մյուների հետ համեմատած): Զափահան անշահրիկի զինը 200 դրամ էր (54, 11—15 հոդ.):

Անկային, դատիղով Դատաստանագրքի բազմաթիվ հոդվածներից, կարելի է հզրակացնել, որ վաղ ֆեոդալական հարաբերությունների սկզբանության շրանում (մ.թ. 6—7 դ.) սարկությունը իրանում աստիճանաբար ընդունվել էր ժամանակավոր բնույթի: Նման եզրակացությունը ըստում է հնական վատահերթից: ա) Օրենքը (33, 13—17 հոդ.) միայն ուրի էր իրավանք փերապահուութիւն դաշտակին սարկության վաճառելու և այն էլ բացառիկ դեպքերում, ասենք՝ ապրուածի միջոցներից իսպան զորկ լինելու դեպքում: Ընդ որում, նա պետք է իր զավակին վաճառել միայն իր կամ կնոջ ազգականներին: բ) Ըստ 20, 7—10 և 31, 15—32, 1 հոդվածների, իմբ անշահրիկ—սարուկներին տեղը պաշտապում էր (դարձնում արդյունքության արքայից արքայի հպատակ, իմա՞ ազատ մարդ), ապա նրան կրկն սարկացնել էր թուլպարուփում: գ) Անշահրիկ—սարուկներին սովորաբար նստեցնում էին առանձին հոգակուրների վրա, որոնք չէր կարելի օտարել առանց նրանց: Այդ ճանապարհուն նրանում ևս առաջանում էր «երդումարտերի» կամ նստացված սարուկների տեսքը պատրիան, ինչպես տեղի էր ունեցել Հայաստանում: Փամանակի ընթացքում այդ վերցիներին զանում էին նորու զդուցքիներ: Այս մասին է վկայում այն փաստը, որ անշահրիկը, ըստ 106, 1—4 հոդվածի, կարու էր ունենալ խոստակ («խվաստակ»՝ գույք), կամ, ըստ Ա. 2, 16—17 հոդվածի, եկամուտ: դ) Սովորական կրծույթ էր զարձել սարուկների մասնակի ազատագրում: Օրինակ, անշահրիկ—սարուկներին կարող էին պատագրել 1/10 լավուու (1, 6—7 հոդ.): Կիսուու շափ (48, 13—16 հոդ.): մեկ տարով (69, 3—6 հոդ.): Ընդ որում, նույն շափով էլ ազատագրումը կին սարուկի կամ սարկուու զավակները: Սարուկների մասնակի ազատագրումը վկայում է, որ լին կամ մշտականատիրոց դաստակերի հետ համապատասխան ստրկությունը տնօսեսակս իրեն այլևս չէր արդարացնում և սարկատիրները սարուկներին հնարավորու-

թյուն էին տալիս իրենց ժամանակի մեծ մասը նվիրել անձնական անտեսություններին, որպեսզի բարձրացնեն իրենց արտադրողականությունը նաև տիրոջ տնտեսություններում: Այդ ժամանակի ազտատարումները, վերջիվերջ, տանելու էին դեպի ստրուկների ճորտացումը: Ե) Տարածում էր ստանում նաև ժամանակավոր ստրությունը: Օրինակ՝ ստրկացնում էին մեկ տարով (57, 16—58, 3, 69, 3—6, 89, 1—3 հոգվածներ), զ) Սարուկների անձնական գույք կամ հեկանուում ունենալու մասին է վկայում, ունինակ, 1, 4 հոգվածը, սաս որդ, եթե անշահրիկ—ստրուկը իր տիրոջ ներկայությամբ մեկ ուրիշ մարդու նկատմամբ ֆիդիկական բռնություն ոռոգարեր (ասենք՝ հարվածելով վիրագորեր), ապա տուգանիք կեսր ինքը պիտի վճարեր, իսկ տերը՝ մյուս կեսը: Եթե անշահրիկը անձնական գույքը (սեփականություն) չունենար, հասկանալի է, ի վիճակի շքը ինելու տուգանք վճարելու: Է) Ստրուկը իրավունք ուներ զատարանում հանդես գալու իր նախկին տիրոջ մագ ստրկատիրոջ զեմ և ապացուցելու իր արտադրած լինու հանգամանքը: Նման պատասխում, բայ 106, 9—11 հոգվածի, նրան թուլատրվում էր օրդայիալի հնիթարկելու (իմա՞ երցման միջոցով ապացուցելու իր արդարացի լինելը): Այդ իրավունքից զրկված էին ընդհանրապես ստրուկները և ուամիկները, երբ նրանք զատարանում հանդես էին զալիս որպես վկաներ:

Սասանյան Գատաստանագրի բռվանդաւությունո որոշ պատկրացում է տալիս նաև հասարակական այլ խավերի մասին: Վաղ ֆեոդալիզմի ժամանակաշրջանում որոշ փոփոխության է լնուուկը հին իոնական հասարակության կաստային—դասային բաժնումը¹⁰: Ստրկատիրության շրջանում ազատ ընակլությունը բաժանված էր երեք դասի՝ բրձության (մողության), զինվորական արիստոկրատիայի և գույքի ու քաղաքի համանական ընակլության: Ըստ այդ առկա առկա կանում էր մասնում ոչ մի կաստայի մեջ: Վաղ ֆեոդալիզմի ժամանակ ձեւվորվում են երեք ապահարկ և

մեկ հարկացու դասերը: Ապահարկ դասերն էին կազմում բրձերը, զինվորականները և բյուրոկրատիան կազմող զպիրները (զարգիրները): Հարկացու զասի մեջ էին մտնում երկրագործները, անանապահները, արհեստավորներն ու առևտրականները, որոնք վճարում էին նաև զիմահարկ:

Գատաստանագրի 57, 6—9 հոգվածից կարիքի է եղած կացնելու, որ գոյություն ունենի մանր ազնվականները, որոնք իրենց ծառայության համար պետությունից ստանում էին սպարգանականք՝ պայմանական հող:

Ըստ նշված հոգվածի, «ասարարը»՝ հեծյալ զինվորական ծառայության համար պետությունից ստանում էր խոսական որպես «եմուման» («պատմումանի»՝ հանդերձանքի համար), որը նրա մահցից հետո պետք է վերադարձվեր զանձարանին: Գատաստանագրից պարզվում է, որ ասարարները գրանցվում էին հատուկ ցուցակում (Ա: 6, 11—16, Ա: 17, 16, Ա: 19, 2—6 հոգ. հոդ.):

Գատաստանագրի 50, 3—4 հոգվածը վկայում է, որ հեթանոսական տաճարները (բրձերը) զրագվում էին նաև տաճարա-դրամական գործերով, տոկոս ստանալու պայմանով դրամի դիմ էին փոխ տալիս:

§ 2. Պետական կարգը

Դատաստանագրից որոշ պատկերացում է տալիս նաև իրանական պետական կարգի ու պաշտոններության մասին:

Իրանական վաղ ֆեոդալական միապետության զիմին կանգնած էր շահանշահը՝ արքայից-արքան (100, 11—15 հոդ.):

Արքային առընթեր գործել է արքայական խորհուրդը, որի կազմում եղել էն մոգակաց մոգակաց և զաստարեները՝ խորհրդականները, բարձրաստիճան պաշտոնները (Ա: 39, 11—17), Ա: 35—16 և Ա: 39—11—17 հոգվածները հիշատակում են վաղուրդ—գրամանատարին՝ մեծ հրամանատարին, որը երկիր վարչական էր:

Գատաստանագրում հիշատակված են հետևյալ կենտրոնական դիմաները (գերատեսչությունները). 1. Ոստանի

¹⁰ Хрестоматия по истории средних веков, т. I, Москва, 1961, с. 169.

(«օստանի»), այսինքն՝ արքայից-արքայի դոմենի կառավարման գերատեսչությունը: Այն գլխավորում էր, ըստ Ա 27, 12—13 հոդվածի, օստանգարը, որի իրավասության մեջ էր մըտնությ հոգ տանել, որպասիղ արքայից-արքայի զանձարանը մուտք արվի սահմանված զուրբը և դրամը, պայմանական հողեր հատաշնել պետական ժառայուղներին և կրկին Հարժունքներ վերցնել դրաներ ժառայուղներուց զարգացնելուց հետո: Այսպիսով, այս գերատեսչությանը էր վերապահված արքայից-արքայի հողերից օգտվելու համար հարկեր ու տորքեր սահմանելու դանձելը, Ծոդամասեր բաշխելը և այլն:

Ֆինանսական գերատեսչությունն, ամենայն հավանականությամբ, ուներ համապետական նշանակություն, ի տարրեկություն օստանդարի զիմավորած գերատեսչության, որը ներ իմաստով «արքունիք» էր առավագարում էր անձամբ արքայական տոնմին պատճառ գույքը: Սակայն, ըստ իրենց վորթին, նշանակած էրկու գերատեսչությունները իրավասությունը հաճախ նույնանում էր, քանի որ արքայից-արքայի անձական զանձարանը դժվար էր սահմանադաշտել համապետական զանձարանից:

Ըստ Ա 27, 13—28, 3—5 հոդվածների, ֆինանսական գերատեսչությունը զիմավորում էր զիմավոր համարակարը, որն իրավասու էր սահմանելու գնները, զանձարանի երամուտը (բյուջեն), պատասխանը զանձարանի շահնդիմ պետական գույքի անօրինական տիրապետությունները, մասամբ պատճենը տարածությունը, պատճեն արքայական հողի տիրապետության մասին, պետական հարկեր սահմանելու և դրանց զանձարան հավաքելու մասը (մողակար) և համարակարը պետք է որոշեին պետությանը հասցված վնասի շափը և դրա հատուցման կարգը:

Պերողի որդի Կավաստի (489—531) օրոր մացվեց մոպեաների և համարակարների (ֆինանսական պատճունյաների) պաշտոնական կնիք (սմբռշ): Մոպեաների կնիքը կրում էր հետեւյալ մակարությունը, ուղիւալների շահերի պաշտպանն: Կավաստի որդի Խոսրովի (531—579) օրոր պաշտոնական կնիք մացվեց նաև զատավորների համար (93, 4—9 հոդ.):

3. Հոգենոր գործերի գերատեսչությունը Հիշան-ի-քարտակներուն համապետական հաստատություն էր, որը, ըստ Ա 26, 17—27—4 հոդվածների, կարգավորում էր կրոնական ժիսակատարությունները, տնօրինում՝ տաճարական հկամուտները, լուծում ասաճարական զույգին վերաբերող վեճերը: Այս գերատեսչությունը նույն գերեն ու նշանակությունն ուներ տաճարական զույգի նկատմամբ, ինչ որ ֆինանսական գերատեսչությունը՝ ողջ պետության ելումուտի Գերատեսչությունը զիմավորում էր բարձրասահման հոգենոր մի պաշտոնյա՝ սատրը:

4. Դաստական գերատեսչությունը հիշատակված է 100, 11—15 հոդվածում որպես սեղական պետական օրգան: Սակայն, պետք է ենթաքըլ, որ նման գերատեսչությունների է նաև կենարուում, որպես համապետական գերատեսչություն:

Պետական կարգի մասին խոսելիս, կանգ առնենք նաև Դաստատանագրքում հիշատակված այլ աշխարհիկ և հոգենոր պաշտոնատար անձանց վրա: Աշխարհիկ պաշտոնատար անձանց զիմավորում էր վերը հիշատակված վազուրդ ֆրամանատարը՝ մեծ հրամանատարը: Արքայական զումենում կառավարում էր օստանագրքը: Նահանգներում և զիմավոր քաղաքներում էշխանությունը և կառավարում իրականացնում էին օստանականները (100, 7—11 հոդ.): Օստանական (սոստիկան) նշանակել է վաստահելի անձ, տվյալ զետքում՝ արքայից-արքայի վաստահելի անձ: Ֆինանսական գործնը տեղերում զիմավորում էին համարակարները («Հաշվոները»): Պետական օրգաններին առընթեր կային քրամական պետք՝ պետպանակները: Քաղաքներում կային թաղամասի պետք՝ պետպանները, այսինքն՝ փոլցապանները:

Հոգենոր զատիք պատականող պաշտոնատար անձերից, բացի վերը հիշատակվածներից, Դաստատանագրքում կլայված են նաև մոպաց անդարձատը և աթորվախչը: Մողերի անդարձատը («անդերձապետ»), ըստ երևույթին, մի մոզ կամ մոպենտ էր, որը ձևակերպում էր կտակները (Ա 15, 12—15, հոդ.):

Հոգենոր զատիք պատականող պաշտոնատար անձերից, բացի վերը հիշատակվածներից, Դաստատանագրքում կլայված են նաև մոպաց անդարձատը և աթորվախչը: Մողերի անդարձատը («անդերձապետ»), ըստ երևույթին, մի մոզ կամ մոպենտ էր, որը ձևակերպում էր կտակները (Ա 15, 12—15, հոդ.):

Ա. 40, 3—6 հոդվածներ): Աթուրվախշը այն անձն էր (մեհյանի սպասավորը), որի վրա պարագանություն էր զրվում՝ հետևելու, որպեսզի ասրուցանի կրակը միշտ վառ մնա (Ա. 40, 3—6):

§ 3. Գատական համակարգը

Գատական համակարգը կամված է եղել աշխարհիկ և հոգերո զատարաններից, որոնց իրավասության սահմանները գժվար է որոշել Գատասահանգրքի նյութերով:

Գոյություն են ունեցել ստորագույն և վերագույն զատական ատյաններ թե՛ աշխարհիկ և թե՛ հոգերո զատարաններում, եղել են կրտսեր (գատարակի-բաս) և ավագ (գատարար-իմաս) զատավորներ, որոնք հիշատակվում են 3, 6—8 և այլ հոգվածերում: Հստ 110, 5—11 հոդվածի, յուրաքանչյուր զատական շրջան (շահը, մարզ) ունեցել է գլխավոր զատավոր (գատարարան զատարար): Գատարարներից բացի հիշատակված են նաև զատական բնինիներ՝ փարեծվանները (Ա. 27, 9—11 հոդվ.): Փարեծվանի (բնինի) զատականությունն էր գործիք պարասել զատական նիստու համար, սուտիկ անձերի և կիրքինի իսկովլումը: Սխալ թույլ տալու դիպում նաև կալանավորվում էր: Հստ երեսովին, զատական շրջանները համբնենում էին վարչա-տերիտորիալ բաժնությունների հետ: Հստ Գատասահանգրքի տվյալների իրանում եղել են հեակալ վարչա-տերիտորիալ միավորները. ա) Կոստակ՝ Հայանարար «կուլու»—կողմ բանից: Ա. 31, 3—5 հոդվածում հիշատակված է Խորսանի կուստակը՝ կողմը, ճարպահը, բ) Նահանգը, 2—11 հոդվածը հիշատակում է Արագածաշահիմասնեց նահանգը; գ) Թատոկ՝ շրջան, ըստ 100, 5—7 հոդվածի: դ) Շահը՝ երկիր, մարզ, քաղաք (48, 7—10 և այլ հոդվածներ): ե) Դիմ՝ գուու (78, 11—14 հոդ.): Գատասահանգրքի տվյալներով նարագոր չե որոշել նշված վարչա-տերիտորիալ միավորների մեջ զբարարությունը: Դրանք իշխանության օրգաններին ենթակա վարչական միավորներ էին՝ վերական նշանակված պաշտոնյաների գլխավորու-

թյամբ, որոնք ունեին նաև դատական ֆունկցիաներ կամ որոնց ենթարկվում էին տեղական դատական օրգանները: Հստ Ա. 27, 5—7 հոդվածի, աշխարհիկ աշեղական դատարանների բարձրագույն ասլանն էր կառավարողների («գեհնողական» զատարանը, որը ֆնտում էր մոգերի զասի զատական իրավասությունից զուր գործեր):

Հոգերո զատարանների ամենաբարձր ատյանն էր մոգեկանաց-մոգեկանի զատարանը: Հստ Ա. 27, 4—5 հոդվածի, մյուս բոլոր մարդկանց ասածը պեսք էր կասկածի տակ տակե, բայց մոգեկանց մոգեկան ասածը՝ ոչ: Այստեղից կարիքի է զրականցնե, որ մոգեկանց մոգեկանց վերջինական էր և նիմասնաց վերանայման:

Այդ միտքը կարիքի է հաստատել նաև Ա. 28, 5—7 հոդվածով, որակ սահմանված է, որ մոգեկանց մոգեկանց կարմիր ավագալ գործիք վերաբերյալ ավելի հեղինակավոր էր, բայց օրդակայիլ (երդման) հիման վրա զատարարի կայացրած զատական գատարարի:

Մոգեկանաց-մոգեկանի զատարանից հետո հոգերո վերացան նաև սատի («սրբազնի», «թիմական առաջնորդի») զատարանը, որը, Հավանարար, մողերի դասական վերացան զատարանը էր մոգեկան նախավահությամբ: Բատր, ըստ Ա. 26, 17—27 հոդվածի, իրավասու էր 1. բռնագրածի գույքը, 2. նշանակել տուրք («ասկ, նիսակ»), 3. սահմանել արժեքը և դիմու այն գույքի, որը պեսք էր մուծել տարական զանձարանը և հսկողություն իրականացնել ծիսակատարությունների գերատեսիլություններում եղած զուրքի դրա: 4. քննել հսկողական կարգով ստորին զատարանների բարզարկեցուած գործերը և կայացնել որոշումներ և գնիռներ, 5. ընդհանրապես վարել տաճարական զանձարանին վերաբերող զործերը (արքայական զանձարանի տնօրինությունը բաղկացի համարակարաններին): Բատի որոշումը զատավորների համար հեղինակավոր խոսք էր: Այս հոդվածի վերլուծությունից կարիքի է նիմասնաց վերաբերյալ դիմադրություններին պատճենական գատարական գույքին:

Բացի ուստից, ըստ երկույթին, յուրաքանչյուր դատական շրջանում գոյություն է ունեցել նաև մոպեատի պաշտոն Մոպեատը իրավասու էր քննելու նաև շարավանի զատափորների ընդապատիթյունը հնթակա դործեր Սակայն, ըստ Ա. 26, 11—16 հոդվածի, նրա բացառությունը ընդապատիթյանն էին Հանձնրված՝ աստու նշանակելը և ստորոտիթյունն ազատիլը, բ) որոշակ կայացնել այն դուրս մասին, որը նվիրում էր տաճարին, գ) կտսեցնել շարքային զատափօրների կայացրած զատափինների զորժադրումը: Այստեղից կարեն է հնթագրել, որ մոպեատի ստարտնը նաև թիգման աայան էր ստորին գատարանների նկատմամբ: Մոպեատը նաև ապելացիոն ատառն էր սովորական զատափօրների համար: Եթե պատասխանը ուղարկած համաձայն էր մասին զատափօրի կողմից ընդունված որոշման հետ, գործ ուղարկվում էր մոպեատին՝ ստորին զատարանի որոշումը վերանայելու կամ գործ կրկին քննելու համար (93, 9—11 հոդ.):

Ըստ երկույթին, յուրաքանչյուր դատական շրջանում գոյություն է ունեցել նաև օրդակական (երգման հիման վրա դատող) արիունաւ, որի պետք՝ վար-սարդարը, հավանաբար, մող (քուրմ) էր, սովորաբար տվյալ շրջանի ուստի (Ա. 27, 7—9 հոդ.):

Այդ օրդակական տրիբունալը կոչվում էր «խվարասաան», բանացիուն երգիկելու վտյը (8, 15—17 և այլ հոդվածներ): Դատական համակարգի մասին խոսելիս հիշատակենք նաև կալանավայրերը՝ «զնդանները» (բանտերը) զնդանապանների (բանտապետների) գլխավորությամբ (Ա. 13, 9—11 և այլ հոդվածներ): Բանտապետի օգնականն էր զգիրը («զիկիրը») պահողը զննողը, զննողը, ժանդարմը (Ա. 26, 4—8 հոդ.): Զնդանապանի («զնդանապանի») իրավասության մեջ էր մտնում հակողությունը բանտարկյալների վրա, նրանց իսկությունը (ով լինելը) որոշելը (Ա. 28, 11—29, 5 հոդված):

ՔԱՂԱՔԱՅԻՍԻԱԿԱՆ ԵՎ ՊԱՐՏԱՎՈՐԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

